ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ապրիլի 2026 թվականի №-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №523-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №523-Ն որոշման 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների №4 հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) հավելվածի 1-ին կետի Աղյուսակ N1-ում «277», «300», «229», «234» թվերը փոխարինել համապատասխանաբար «166», «199», «124», «140» թվերով.
   2) հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում «300 000» թիվը և «երեք հարյուր հազար» բառերը փոխարինել «229 000» թվով և «երկու հարյուր քսանինը հազար» բառերով.
   3) հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետում «46 000», «20 000» թվերը և «քառասունվեց հազար», «քսան հազար» բառերը փոխարինել

համապատասխանաբար «16 000», «9 000» թվերով և «տասնվեց հազար», «ինը հազար» բառերով.

4) հավելվածի 3-րդ կետի Աղյուսակ N2-ում «672», «448», «769», «520» թվերը փոխարինել համապատասխանաբար «406», «275», «424», «318» թվերով.
5) հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետում «300 000» թիվը և «երեք հարյուր հազար» բառերը փոխարինել «229 000» թվով և «երկու հարյուր քսանինը հազար» բառերով,
6) հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետում «89 000», «42 000» թվերը և «ութսունինը հազար», «քառասուներկու հազար» բառերը փոխարինել համապատասխանաբար «61 000», «28 000» թվերով և «վաթսունմեկ հազար», «քսանութ հազար» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
ապրիլի 2026թ.